## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

**6 ՀՈՒՆԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 118-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-014-0304-0036 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 1.0 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ և 24-րդ կետերի, 42-րդ հոդվածի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի չորրորդ հոդվածի, 25-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 76-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 463-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 286 որոշման՝

***ո ր ո շ ու մ ե մ.***

հիմք ընդունելով 2022 թվականի հունիսի 4-ին ժամը $11^{30}$-ին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանում տեղի ունեցած **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ, ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ,ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ, ՇԵՆՔԵՐԻ և ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ և ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ»** մասին թիվ 2 արձանագրությունը.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Այգեհատ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-014-0304-0036 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի հողատեսքի, 1.0

հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով, 25 (քսանհինգ) տարի ժամկետով, տարեկան 8000 (ութ հազար) ՀՀ դրամ վարձավճարով, ժամանակավոր օգտագործման տրամադրել 2022 թվականի հունիսի 4-ին Օձունի համայնքապետարանում կայացած մրցույթի, լոտ 2-ի հաղթող Արման Աշոտի Չոբանյանին:

2. Հողամասը գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2022թ., հունիսի 6,**
**Լոռու մարզ, գ. Օձուն**